Պետրոս Դուրյան

Ի դիմավորություն Ամեն . Հայրիկին

Ո՞վ է որ գա մեզ ճեղքած օդն, ալին,
Ճակտին վրա գոհարք, աստեղք կը փայլին.
Թագավո՞ր մ՚է Հայ, որ ցատկեց շիրմեն,
Ո՛չ, դեմքը վառողք արցունք՝ ըսպի են.
Նա կ՚արհամարհե ծիրանի, փառքեր,
Նա սև է հագեր:

Նա մեր Հայ եղբարց արցունքն է քավեր,
Ցույց կուտա մեզի արյուն ու ավեր,
Դյուցա՞զն է մ՚է, որ դո՛ւրս թըռավ դամբանեն,
Ո՛չ, թուր չ՚է՛ ձեռքն, այլ խաչ բոներ արդեն,
Չը ցայտեր աչքեն շանթեր, այլ սե՛ր, գո՛ւթ.

Դողա անկե Քուրդ:

Նա կուգա Հայոց կարմիր մարգերեն,
Ազատեց Քրդեն հեգ Հայ գերիներն,
Խաչափայտով մը պանծացավ հաղթող,
Հնչեցուց ի Հայս ազատության փող,
Տեսե՛ք, քուրձ հագեր, կարծես ինք դիակ,

Բայց սիրտն է կըրակ:

Գա Մասյաց սարեն, նա ձախն ու աջը
Մովսեսի քընարն՝ Ղևոնդի խաչը,
Աստղի մը նայվածք, քընարի մը ձայն,
Աղյաց խորերեն կը սիրե նա Հայն.
Դեռ չը ճանչցա՞ք զ՝այն, ճակա՛տք վըշտակոծ,

Հրեշտակն է Հայոց:

Ահա կը հնչե նորա հեշտ սըրինգ,
Արձագանք կուտան Հայոց դաշտք, լերինք,
Երթանք իր շուրջը, Հայե՛ր արտալած,
Չը խաբեր, մատներ նա մեզ օտարաց,
Չը սիրեր ոսկի, փառք ու վատ մարդիկ,

Հայուն է Հայրիկ:

Գլխիկը դըրած սըգավոր սըքեմ,
Չը թափիր ճակտեն դեռ ալիք վըսեմ,
Բայց իր դիմաց վրա կանուխ են փթթած
Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց.
Միակ վարձք մ՝ունի՝ այն է կոչել զ՝ինք

«ԽԸՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ»:

1869